ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեր հանդեսի փետրվար—մարտ և ապրիլ—մայիս հաջորդական թիվերում արվեստի վաստակավոր գործիչ պ. Գ. Լեվոնյան ուներ ուսումնասիրություն մը «Վատիկանի դիվանագիտական խաղերը կամ Սուլթանշահ Ամիրբեգյանը Հայոց բազավորության բեկնածու» խորագրով։

Այս ուսումնասիրության մեջ սպրդած էր մի հիմնական սխալ, որու մասին հարգ կդատեմ լուսաբանություն մը տալ։ Այս սխալը պիտի տեղ չունենար այդ ուսումնասիրության մեջ, եթե Գ. Լեվոնյան ավելի լայնորեն ծանոթացած լիներ իր նյութին առնչակից աղբյուրների։ Մասնավորապես իր ուշադրության կհանձնեմ Երուսաղեմի «Սիոն» ամսագրի 1931 հոկտեմբերի թիվը, ուր կա մի ուսումնասիրություն «Ստեփաննոս Սալմաստեցի և Ստեփաննոս Առնջեցի կաթողիկոսներու ժամանակագրությունը» էջ (305—311) խորագրով։ Եթե ծանոթ ըլլար Գ. Լեվոնյան այս գրության, անիկա պիտի չըսեր շատերեն կրկնված այն սխալը, թե Ստեփաննոս Սալմաստեցի իբր թե Լեհաստանեն Մոսկվայի ճանապարհով և «ապա Ղրիմի վրայով դառնում է Անդրկովկաս և էջմիածին հասնում 1551 թվին («էջմիածին» էջ 49)։

Անսուտ վավերագիրներ, ընդհակառակը, ցույց կուտան, թե Ստեփաննոս Սալմաստեցի մեռած է 1551 թվի վերջերը կամ, ավելի ճիշտ, 1552 թ. հունվարի 14-ին Իլով կամ Լեմպերկ քաղաքին մեջ (տես Ալիշան, Կամենից, էջ 19—135)։

Իր մահեն հետո ուրիշ Ստեփաննոս կաթողիկոս մը Առնջեցի Զպլախ մականուանյալ, Եվրոպայի մեջ իր առաքելությունը շարունակել կփորձե։

Այս Ստեփաննոս Առնջեցի կաթողիկոսը, ինչպես հիշատակարաններ կհաստատեն, 1562-ին կգտնվեր Լեհաստան, ուր կայցելեր Կամենից և Լեմպերկ քաղաքները (Կամենից, էջ 22 և մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Վենետիկի, Ա. հատոր, էջ 837)։

Այս կաթողիկոսը, որ պաշտոնավարած է առնուազն մինչև 1572, (ըստ հիշատակարաններու 1564 թվականով, Ալիշան, «Արարատ»—էջ 230. 1565 թվականով ցուցակ հայ ձեռագրաց կայսերական մատենադարանի, Վիեննա, Տաշյան, էջ 38, 1566 թվականով Հ. Մինաս Բժշկյան, ճանապարհորդություն Լեհաստան, էջ 143, 1567 թվականով՝ Կամենից, էջ 164, ցուցակ հայ ձեռագրաց կայս. մատենադ. ի Վիեննա, էջ 22 և 1572 թվականով՝ ցուցակ ձեռագրաց Վասպուրականի, էջ 676) կրավի ըլլալ ղեկավարող ուժը Սալմաստացիի հետո շարունակելով անոր գործը Եվրոպայի մեջ, իր ձեռնարկներուն ուժ տալու դերը թողլով իր աթոռակցին՝ Միքայել Սեբաստացիի, որ անոր Եվրոպա մեկնած տարին՝ 1562-ին Սեբաստիոն մեջ գումարած է այն ժողովը, ուր Արգար զպրի թագավորած ըլլալը հաստատված են և իբր աշխարհական պատգամավոր Եվրոպա ղրկել որոշած, թերևս խաբվելով Ստեփաննոս Առնջեցի կաթողիկոսեն եղած կեղծ խոստումներեն։

Այս պարագան շատ կարևոր է մեկնելու համար Միքայել Սեբաստացիի ձեռնարկը, որ անմեկնելի պիտի մնար առանց այս կապակցության։

Ուստի պիտի խնդրեի, որ հաճեիք տեղ տալ այս համառոտ գրության ձեր հանդեսին մեջ լուսաբանության համար։

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

Գահիրե, Եգիպտոս